Հաստատում եմ»

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան»

հիմնադրամի ռեկտոր,

տեխն.գ.դ., պրոֆեսոր _____ Ռ.Ռ. Սահակյան

«05» 06 _____ 2024 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Աստղիկ Յուրիկի Հովսեփյանի «Տարբերակված ուսուցման հիմնախնդրի իրականացման ուղիները տարրական դպրոցում» խորագրով ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Աստղիկ Յուրիկի Հովսեփյանի «Տարբերակված ուսուցման հիմնախնդրի իրականացման ուղիները տարրական դպրոցում» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի նիստում (Արձ. թիվ 19, կայացած՝ 04.06.2024թ.):

Մասնակցում էին «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի մ.գ.դ., պրոֆեսոր Պ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտներ Լ. Բաղդասարյանը, Ս. Բեժանյանը, Լ. Հարոյանը, Ա. Հարությունյանը, Ա. Հովհաննիսյանը, Ք. Վիրաբյանը, Լ. Դանիելյանը ասիստենտ՝ մ.գ.թ. Լ. Մարուքյանը, հ. գ. թ. դոցենտներ՝ Ն. Կոստանդյանը, Վ. Միրզոյանը, Մ. Շահվերդյանը, Մ. Մազմանյանը, Հ. Ավագիմյանը, Ա. Ղազարոսյանը, դասախոսներ Ա. Խաչատրյանը, Ն. Հովսեփյանը, Ս. Մալումյանը, Մ. Միքայելյանը, Ն. Ստեփանյանը:

Գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված անընդհատ փոփոխվում են կրթության կիրարկման ուղիներն ու ձևերը, որոնք, միևնույն ժամանակ,

պահանջում են նոր մոտեցումներ ու մտահղացումներ: Բոլոր ժամանակներում էլ մանկավարժները կարևորել են աշակերտի անհատական առանձնահատկությունները և իրենց գործունեությունը համապատասխանեցրել են անհատի ընդունակություններին ու հետաքրքրություններին:

Այս համատեքստում էական նշանակություն է ձեռք բերում տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը տարրական դպրոցում, և ատենախոսն անդրադարձել է այս հույժ կարևոր հետազոտության թեմային, որը միտված է տարրական դպրոցում տարբերակված ուսուցման հիմնախնդրի լուծմանն ու արդյունավետ ուղիների առաջադրմանը:

Հետազոտության հիմնախնդիրը դիտարկվում է կրթության անձնակողմնորոշիչ հարացույցի համատեքստում:

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտության արդիականությունը, ներկայացված են հետազոտության բաղադրիչները՝ օբյեկտը, առարկան, նպատակը, հետազոտության խնդիրները, առաջադիր վարկածը, մեթոդները, մեթոդաբանական հիմքը, գիտատեսական ու գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները, որոնք բովանդակային առումով համապատասխանում են և հիմնավորված են եզրակացությունների մեջ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և թվով 17 հավելվածից:

Ատենախոսության առաջին «Հանրակրթական դպրոցում տարբերակված ուսուցման տեսական-մեթոդաբանական հիմքերը» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին «Տարբերակված ուսուցման վերաբերյալ տեսական-մեթոդաբանական մոտեցումների վերլուծություն» ենթագլխում դիտարկվել են հիմնախնդրի վերաբերյալ տեսական և հայեցակարգային մոտեցումները:

Երկրորդ «Կրտսեր դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկությունների բնութագիրը» ենթագլխում բնութագրված են կրտսեր դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Երրորդ «Տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունները, սկզբունքներն ու մանկավարժական պայմանները տարրական դպրոցում» ենթագլխում բնութագրված են հեղինակի կողմից

առանձնացված տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունները, սկզբունքներն ու մանկավարժական պայմանները:

Ատենախոսը հանգամանալից վերլուծել է հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականությունում առկա տեսությունները, հայեցակարգային մոտեցումները, մեկնաբանել «անհատականացում» և «տարբերակում» հասկացությունները՝ վեր հանելով դրանց սկզբունքային տարբերություններն ու կիրառական ոլորտի մանկավարժական առանձնահատկությունները դաս-դասարանային համակարգի պայմաններում:

Ատենախոսության երկրորդ՝ «Տարրական դպրոցում տարբերակված ուսուցման հիմնախնդրի իրականացման ուղիների արդյունավետության փորձարարական հիմնավորումը» գլուխը կազմված է չորս ենթագլխից:

Առաջին՝ «Տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման ձևերը տարրական դպրոցի ուսուցման գործընթացում» ենթագլխում ներկայացված են առաջարկվող տարբերակված ուսուցման ձևերը «Մայրենի», «Մաթեմատիկա», «Ես և շրջակա աշխարհը» առարկաներից:

Երկրորդ՝ «Տարբերակված ուսուցանող և զարգացնող խաղերի կիրառումը տարրական դպրոցում որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց» ենթագլխում ներկայացված են հեղինակի կողմից մշակված և փորձարկված են ուսուցման հեղինակային մեթոդներ և ուսուցանող ու զարգացնող տարբերակված խաղեր 1-4-րդ դասարանների համար:

Երրորդ՝ «Տարրական դպրոցում ներդասարանային տարբերակված տարամակարդակ ուսուցման մոդելի կառուցվածքի ընդհանուր բնութագիրը» ենթագլխում ներկայացված է տարրական դպրոցում ներդասարանային տարբերակված եռամակարդակ ուսուցման մոդելի կառուցվածքը, որի արդյունավետությունը փորձարարությամբ հիմնավորվել է:

Չորրորդ՝ «Փորձարարական աշխատանքների կազմակերպումը և մեթոդիկան» ենթագլխում ներկայացված են հետազոտության կազմակերպման ընթացքը և արդյունքների վերլուծությունը:

Ատենախոսության մեջ ակնհայտ են հեղինակի հետազոտական և մասնագիտական կարողությունները, և սեփական ներդրումը տարբերակված առաջադրանքների մշակման ոլորտում:

Առանձնակի գիտական նորույթ և արժեք է ներկայացնում ներդասարանային տարբերակված ուսուցման մոդելը, որում ներառված են տարբերակված ուսուցման նպատակը, ժամանակակից մանկավարժական մոտեցումները, ատենախոսի մշակած դասերի ձևերն ու տեսակները, կիրառված ուսուցման միջոցները, հեղինակային մեթոդներն ու տարբերակված ուսուցանող և զարգացնող խաղերի համալիրը, մանկավարժական պայմանները, ակնկալվող վերջնարդյունքները, որոնց հետագա հրապարակայնացումը գործնական մեծ օգնություն կլինի հանրակրթական դպրոցի ուսուցիչների համար:

Վերոբերյալը հավաստի է դարձնում հետազոտության արդյունքների արժանահավատությունն ու հիմնավորվածությունը, որը տևական ժամանակ կիրառվել է հանրակրթական դպրոցում և ունեցել է արդյունավետության բարձր ցուցանիշներ:

Ատենախոսությունը ամբողջական, ինքնուրույն, արդիական հնչեղություն ունեցող տեսական և կիրառական հետազոտություն է, որն արտացոլում է հեղինակի հոգեբանամանկավարժական, մասնագիտական գիտելիքները, գիտահետազոտական ինքնուրույն աշխատանք կատարելու կարողությունները, ստեղծագործական ընդունակությունները:

Պահպանված են թեկնածուական ատենախոսության բովանդակային, կառուցվածքային, լեզվառճական կողմին ներկայացվող պահանջները:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլում է նրա հիմնական դրույթները:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարված գիտական աշխատանքը՝ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառումներ և առաջարկներ.

1. Ատենախոսության 2-րդ գլխի 1-ին՝ «Տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման ձևերը տարրական դպրոցի ուսուցման գործընթացում» ենթագլխում՝ էջ 41, 42, հեղինակն առաջարկում է տարբերակված տնային առաջադրանքի հանձնարարման օրինակ առաջին դասարանցիների համար, այնինչ ՀՀ- ում առաջին դասարանցիներին տնային հանձնարարություններ չեն տրվում:

2. Հետազոտության 4-րդ խնդրի լուծումն այնքան էլ հստակ չէ ներկայացված աշխատանքում՝ կապված ներառականության հետ:

3. Վերաձևակերպման կարիք ունեն էջ 108-ում առկա հետևյալ մտքերը՝ «արտասանիր բաղաձայն տառերը», «արտասանիր բաղաձայն տպագիր մեծատառ տառերը»:

4. Ատենախոսության 45-68 էջերի բովանդակությունը կարելի է ներառել հավելվածներում:

5. Առկա են վրիպակներ 17-րդ, 69-րդ, 79-րդ, 115-րդ, 133-րդ, 135-րդ, 150-րդ էջերում:

Եզրակացություն

Հետազոտության թեմայի արդիականությունը, տեսական և գործնական նշանակությունը, գիտական նորույթը, ձեռք բերված արդյունքների հիմնավորվածությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Աստղիկ Յուրիկի Հովսեփյանի «Տարբերակված ուսուցման հիմնախնդրի իրականացման ուղիները տարրական դպրոցում» խորագրով ատենախոսությունը համակարգված, ինքնուրույն, ավարտուն աշխատանք է, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտական թվանիշին:

Հետևաբար, ատենախոսին կարելի է շնորհել հայցվող մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի վարիչ՝ մ.գ.թ., դոցենտ Է.Գ. Բաղդասարյան

Է. Բաղդասարյանի ստորագրությունը հաստատում եմ

ՎՊՀ-ի գիտքարտուղար՝ մ.գ.թ., դոցենտ Ս.Ս. Բեժանյան